

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	3
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	5
1.4. Առևտուր	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ և վարկեր	15
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	18
8. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. տնտեսական զարգացումներն ամսական կտրվածքով ուսումնասիրելիս՝ անհրաժեշտություն է առաջանում դիտարկել նաև նախորդ տարվա զարգացումների դինամիկան: Պատճառն այն է, որ տնտեսագիտական վերլուծությունների և տնտեսության վիճակի մասին դատողություններ անելու համար օգտագործվում են ցուցանիշների աճերը՝ հիմնականում նախորդ տարվա համեմատությամբ: Հետևաբար, եթե նախորդ տարվա արդյունքները խիստ ցածր են, ապա ընթացիկ տարվա նույնիսկ «բնականոն» տնտեսական գործընթացների առկայությունը թույլ կտա արձանագրել չափազանց բարձր աճեր (այդ երևույթը տնտեսագետները սովորաբար անվանում են բազայի էֆեկտ): Սակայն, միշտ չէ, որ բարձր աճը նշանակում է վերականգնում, քանի որ նախորդ տարվա ցածր արդյունքներից նախաճգնաժամային մակարդակներին վերադառնալու համար անհրաժեշտ է լինում ավելի բարձր աճի արձանագրում:


Վերը նշվածի լավագույն դրսևորումը կարող ենք տեսնել ապրիլ ամսվա տնտեսական ակտիվությունը բնութագրող ցուցանիշների վերլուծությունից: 2020թ. ապրիլ ամսվա ամբողջ ընթացքում գործում էին տնտեսական ամենախիստ սահմանափակումները՝ կապված COVID-19-ի համավարակի տարածման կանխարգելման միջոցառումների հետ: Սահմանափակումները վերաբերում էին տնտեսության գրեթե բոլոր ոլորտներին, այդ թվում՝ ծառայություններին, արդյունաբերությանը և շինարարությանը: Արդյունքում, կառավարությանը չհաջողվեց նվազեցնել հիվանդության տարածման տեմպը, սակայն հաջողվեց արագացնել տնտեսական ճգնաժամի ընթացքը, և գրեթե բոլոր ոլորտներում արձանագրվեցին խոր անկումներ:

Ի տարբերություն 2020 թվականի՝ 2021 թվականի ապրիլին տնտեսական սահմանափակումներ առկա չեն, և տնտեսությունը վերականգնվելու էական արգելքներ չունի: Սակայն, ստորև ներկայացված վերլուծության արդյունքները փաստում են, որ վերականգնում տեղի չի ունեցել, իսկ տնտեսական բարձր ցուցանիշները կապված են բացառապես բազայի էֆեկտի հետ: Այդ պատճառով գծապատկերներում կներկայացնենք նաև 2020թ. ամսական աճի ցուցանիշները (ամսվա աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ), որպեսզի առավել ակնառու լինի բարձր աճերի հիմքում ընկած երևույթը՝ բազայի էֆեկտը:

Այսպես, 2021թ. ապրիլ ամսվա տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 23.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 19.3 տոկոսային կետով: Արդյունքում, կուտակային՝ հունվար-ապրիլ ամիսների տնտեսական ակտիվության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2.6%: Սակայն, հաշվի առնելով այն, որ նախորդ տարվա


համապատասխան ցուցանիշը նվազել էր մոտ 1.4%-ով, կարող ենք նշել, որ առաջին չորս ամիսների ընթացքում տնտեսական ակտիվության աճը, առանց բազայի էֆեկտի, կազմել է շուրջ 1.2%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2021թ. հունվար-ապրիլ ամիսների 2.6% ՏԱՑ-ի աճն առավելապես պայմանավորված է առևտրի և շինարարության ոլորտներում տնտեսական ակտիվության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.7 և 1.1 տոկոսային կետ: Փոքր դրական նպաստում է ունեցել նաև արդյունաբերությունը՝ 0.2 տոկոսային կետի չափով: Ծառայությունների ոլորտը շարունակել է դրսևորել բացասական դինամիկա, ինչի արդյունքում ՏԱՑ-ին ունեցել է բացասական նպաստում 0.6 տոկոսային կետի չափով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության աճը ապրիլ ամսին արագացել է, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշը դարձել է դրական: Արդյունաբերության ոլորտում տարեսկզբից գրանցվում էր անկման տեմպի դանդաղում, իսկ մարտ և ապրիլ ամիսներին գրանցվել է աճ նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ: Արդյունքում հունվար-ապրիլ ամիսների արդյունաբերության աճի ցուցանիշը կազմել է 0.9%՝ նախորդ տարվա 4.4% աճի համեմատ դանդաղելով 3.5 տոկոսային կետով:

2021թ. հունվար-մարտ ամիսների տվյալներով¹ արդյունաբերությունը դեռևս նվազող էր, ինչը հիմնականում պայմանավորված էր մշակող արդյունաբերության շուրջ 11.6% անկմամբ (նպաստումն ընդհանուր արդյունաբերությանը՝ -7.3%): Հանքագործական արդյունաբերության, ինչպես նաև «էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղերի համապատասխանաբար 8.1 և 11.2 տոկոս աճերը հակազդել են նվազմանը՝ ունենալով 1.6 և 1.8 տոկոսային կետ նպաստում ընդհանուր արդյունաբերությանը:

¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-ապրիլ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճը կտրուկ արագացել է, սակայն դա բավարար չի եղել բազայի էֆեկտը «հաղթահարելու» համար: Այսպես՝ ապրիլին շինարարության ծավալները աճել են 87.7%-ով, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների աճը կազմել է 20.3%: Սակայն, պետք է նկատել, որ նախորդ տարվա ապրիլին շինարարության անկումը եղել էր 51%, այսինքն՝ կրճատվել էր ավելի քան երկու անգամ: Հետևաբար ակնհայտ է, որ մինչճգնաժամային մակարդակի վերականգնման համար անհրաժեշտ էր, որ շինարարության ծավալներն աճեին առնվազն երկու անգամ՝ 100%-ից ավելի, ինչը տեղի չի ունեցել: Եթե շինարարության հունվար-ապրիլ ամիսների աճից փորձենք հանել նախորդ տարվա բազայի էֆեկտը, ապա կստացվի անկում՝ շուրջ 6.0%-ի չափ: Հետևաբար, «երկիրը շինհրապարակի վերածվելու» վերաբերյալ հայտարարությունները առնվազն անհասկանալի են:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում պատկերն ավելի մտահոգիչ է: Ծառայությունների աճը ապրիլին կազմել է 15.4%, այն դեպքում, երբ նախորդ տարվա անկումը կազմել էր 17.0%: Հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշը դեռևս բացասական տիրույթում է, այն դեպքում, երբ նախորդ տարվա ապրիլին ծառայությունների գրեթե բոլոր տեսակների մասով գործում էին խիստ սահմանափակումներ:

Հունվար-մարտ ամիսների տվյալներով² ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (անկումը՝ 36.1%) և «տրանսպորտային ծառայություններ» (անկումը՝ 25.3%) ենթաճյուղերի անկումներով, որոնց նպաստումները ընդհանուր ծառայությունների անկմանը կազմել են համապատասխանաբար 8.0 և 2.0 տոկոսային կետ: Ծառայությունների անկմանը հակազդել է միայն «տեղեկատվություն և կապ» (աճը՝ 12.8%) ենթաճյուղի աճը, որի դրական նպաստման չափը կազմել է 1.7 տոկոսային կետ:

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-ապրիլ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում ապրիլին նույնպես գրանցվել է կտրուկ աճ՝ կրկին պայմանավորված բազայի էֆեկտով: Ապրիլ ամսին առևտրի ծավալներն աճել են նախորդ տարվա ապրիլի համեմատ 47.8%-ով, ինչը նախորդ տարվա 33.1% անկման հետ համեմատ ոչ բավարար ցուցանիշ է, քանի որ բազայի էֆեկտը հանելու դեպքում հունվար-ապրիլ ամիսների համար կստանանք մոտ 4.2% անկում:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %




Արտահանման ծավալների աճի տեմպը կտրուկ արագացել է՝ կապված հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման աճով: 2021թ. ապրիլին

Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 64.3%-ով, ինչի արդյունքում արտահանման կուտակային աճը նույնպես զգալի արագացել է՝ հասնելով 16.7%-ի: Ի տարբերություն տնտեսության ճյուղերի վերը նկարագրված զարգացումների՝ արտահանման աճը պայմանավորված է ոչ միայն բազայի էֆեկտով, այլև համաշխարհային շուկայում պղնձի գների աճով:

Հունվար-մարտ ամիսների տվյալներով³ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է հանքահումքային արտադրանքի (աճը՝ 21.5%) աճով, որի նպաստումը կազմել է շուրջ 7.0 տոկոսային կետ: Արտահանման աճին հակազդել են «սարքեր և ապարատներ» (անկումը՝ -72.6%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ -26.7%) ապրանքախմբերը՝ արտահանման անկմամբ, որոնց նպաստումները ընդհանուր արտահանման նվազմանը կազմել են համապատասխանաբար 2.8 և 3.8 տոկոսային կետ:

Արտահանման ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում շուրջ 1 տոկոսային կետով մեղմվել են հունվար և հունվար-փետրվար ամիսների անկումները, իսկ հունվար-մարտ ամիսների աճը 3.4%-ից դարձել է 4.0%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալների աճը նույնպես արագացել է, սակայն միայն բազայի էֆեկտի հաշվին: 2021թ. ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 39.1%-ով, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների կուտակային անկումը դարձել է աճ՝ կազմելով 2.2%: Սակայն, եթե այդ ցուցանիշից հանենք բազայի էֆեկտը, ապա կուտակային ցուցանիշը կլինի բացասական՝ արտացոլելով տնտեսությունում թույլ պահանջարկը:

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-ապրիլ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

2021թ. հունվար-մարտ ամիսների տվյալներով⁴ ներմուծման կառուցվածքում դրական միտում է ունեցել միայն «բուսական ծագման արտադրատեսակներ» ապրանքախմբի ներմուծումը, որի աճը կազմել է 3.1% և ընդհանուր ներմուծմանն ունեցել է աննշան նպաստում՝ 0.1 տոկոսի չափով: Մնացած ապրանքատեսակներն ունեցել են նվազող դինամիկա: Առավել նշանակալի են եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «պատրաստի սնունդ» ապրանքախմբերի ներմուծման կրճատումը, որոնց բացասական նպաստումներն ընդհանուր ներմուծմանը կազմել են համապատասխանաբար 1.8 և 1.3 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում 2021թ. հունվար-մարտ ամիսների ներմուծման անկումը 8.7%-ից դարձել է 8.6%:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-մարտ ամիսներին տեղի է ունեցել աշխատավարձերի աճ պետական հատվածում և նվազում՝ մասնավոր հատվածում⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 2.9%-ով՝ կազմելով 194,109.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 1.8%-ով և կազմել 166,872.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը նվազել է 4.4 տոկոսային կետով՝ կազմելով 207,449.0 դրամ:

⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-ապրիլ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:



⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը
2020-2021թթ. հունվար-մարտ ամիսներին, %**



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**





2021 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը պահպանել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ արժեզրկման միտումը, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորման տեմպը դանդաղել է: Հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ պահպանվել է գրեթե նույն մակարդակում՝ կազմելով համապատասխանաբար 7.7% և 15.7%, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի արժևորման տեմպը զգալիորեն դանդաղել է՝ կազմելով 1.0%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁶


5.1. Բյուջեի եկամուտները

2021թ. ապրիլին պետական բյուջեի եկամուտներն աճել են: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 2.1%-ով՝ կազմելով 537.3 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը կազմել է 2.4%, իսկ անվանական հարկերի ցուցանիշը կազմել է 513.0 մլրդ դրամ:

Բյուջեի այլ եկամուտները նույն ժամանակահատվածում նվազել են 2.0%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 34.9%-ով:

⁶ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների աճը հունվար-ապրիլ ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 3.4%), մաքսատուրքի (աճը՝ 31.8%) և սոցիալական վճարների (աճը՝ 77.1%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները համապատասխանաբար կազմել են 1.0, 1.3 և 1.2 տոկոսային կետ: Նկատենք, որ հարկային եկամուտների աճը ապահովող երեք գործոններից երկուսը կապված չեն տնտեսական իրավիճակի և հարկային վարչարարության հետ: Այսպես, մաքսատուրքերի աճը պայմանավորված է ԵԱՏՄ երկրների ընդհանուր ներմուծման աճով, իսկ սոցիալական վճարների աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով (որոնց համաձայն բարձրացվել են սոցիալական վճարների դրույքաչափերը): Հետևաբար, այս գործոնները հաշվի չառնելու պարագայում, հարկային եկամուտների կուտակային ցուցանիշը հունվար-ապրիլ ամիսներին կլինի բացասական:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-ապրիլ		2021թ. հունվար-ապրիլ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	7.3	7.3	2.4	2.4
ԱԱՀ	2.5	0.8	3.4	1.0
Շահութահարկ	14.3	2.4	-1.0	-0.2
Եկամտային հարկ	9.7	2.8	-0.5	-0.2
Ակցիզային հարկ	11.2	0.8	-26.0	-1.9
Շրջանառության հարկ	9.6	0.3	-2.6	-0.1
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	34.8	1.0	13.7	0.5
Մաքսատուրք	-20.5	-1.2	31.8	1.3
Սոցիալական վճար	19.5	0.3	77.1	1.2
Այլ հարկային եկամուտներ	36.3	0.5	46.1	0.8
Պետական տուրք	2.4	0.1	-6.3	-0.1

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերը շարունակում են աճել՝ թույլ տնտեսական ակտիվության պայմաններում: 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական

բյուջեից իրականացվել է 589.6 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 16.0%-ով:

Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 10.1%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 2 անգամ աճով: Ընդ որում, հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ծավալը աճել էր մարտ ամսին (միայն մարտ ամսին կատարվել է մոտ 41 մլրդ դրամի կապիտալ ծախս), ինչը պայմանավորված է ռազմական ծախսերի իրականացմամբ (<< ՊՆ շենքային պայմանների բարելավում), իսկ ապրիլին կապիտալ ծախսերի աճը բավական փոքր է (ապրիլի աճը նախորդ տարվա ապրիլի նկատմամբ կազմել է 5.5%): Դա նշանակում է, որ կապիտալ ծախսերի նման բարձր մակարդակը չի ուղղվել տնտեսական զարգացմանը, այսինքն՝ այդ նպատակով նախատեսված ծախսերը չեն իրականացվել:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն 2021թ. առաջին չորս ամիսների ընթացքում եղել է պակասուրդային: 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ՝ 52.2 մլրդ դրամի չափով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ զգալի մեծ լինելով հանդերձ, պակասուրդը հեռու է բյուջեով ծրագրավորված ցուցանիշից, ինչի պատճառներից մեկը կապիտալ ծախսերի թերակատարման հիմնախնդիրն է:


5.4. Պետական պարտք

2021թ. ապրիլի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,772.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աճելով 18.5%-ով:

Միաժամանակ, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 28.7%-ով՝ հասնելով 4,567.4 մլրդ դրամի:

Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ՝ 19.8%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 30.1%-ով: Ինչպես երևում է, պարտքի աճի տեմպը շարունակում է մնալ բարձր, ինչը միջնաժամկետում կարող է հանգեցնել ավելի լուրջ խնդիրների, եթե պարտքի գումարները շարունակեն օգտագործվել ընթացիկ ծախսերի սպասարկման նպատակով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը շարունակում է բարձր տեմպերով արագանալ: 12-ամսյա գնաճը ընթացիկ տարվա ապրիլին հասել է 6.2%-ի, ինչն ամենաբարձր ցուցանիշն է 2015-ից հետո: Գնաճի վրա ազդող հիմնական գործոններից կարելի է առանձնացնել ՀՀ դրամի արժեզրկումը և արտաքին աշխարհում պարենային ապրանքների գների աճը: Հետագա ամիսներին գնաճը զսպելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը մայիսին կրկին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.0%-ի մակարդակում:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. ապրիլին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը փոքր-ինչ արագացել է: Ավանդների աճի դանդաղման՝ նախորդ տարի սկիզբ առած միտումը աստիճանաբար մարում է և ավանդների աճի տեմպը շարունակում է արագանալ: 2021թ. ապրիլի վերջի դրությամբ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ավանդների ծավալներն աճել են 8.1%-ով: Սակայն, վերոհիշյալ գծապատկերից երևում է, որ այստեղ նույնպես առկա է բազայի էֆեկտը, քանի որ 2020թ. ապրիլին տեղի էր ունեցել ավանդների ծավալների աճի տեմպի դանդաղում:


Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2021թ. ապրիլին ավանդների աճը հիմնականում պայմանավորված է եղել ձեռնարկությունների ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 5.3 տոկոսային կետ: Ոչ ռեզիդենտներից ներգրավվող ավանդների ծավալը շարունակել է նվազել՝ ընդհանուր ավանդներին ունենալով բացասական նպաստում (0.8 տոկոսային կետի չափով):

Վարկերի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) աճը 2021 թվականի ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ փոքր-ինչ արագացել է՝ կազմելով 10.5%: Ինչպես ավանդների պարագայում, վարկերի դեպքում ևս առկա է բազայի էֆեկտի ազդեցությունը, քանի որ 2020թ. ապրիլին վարկերի աճի տեմպը կտրուկ նվազել էր:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի աճին հիմնականում նպաստել են հիպոթեքային, արդյունաբերության և ծառայությունների ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.9, 3.0 և 2.8 տոկոսային կետ: Վարկերի աճին հակազդել է սպառողական և այլ ճյուղերին տրամադրվող վարկերի ծավալների նվազումը: Դրանց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.3 և 2.3 տոկոսային կետ:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը որոշակիորեն բարելավվել է, և COVID-19-ի երրորդ ալիքի ուժգնությունը թուլացել է: 2021թ. ապրիլին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը եղել է բավական բարձր՝ 781 օրական դեպք, իսկ մահվան դեպքերը կազմել են օրական 20-ը: Մայիսին իրավիճակը փոքր-ինչ բարելավվել է՝ միջին օրական նոր գրանցված դեպքերը կազմել են 243, իսկ մահվան միջին օրական դեպքերը՝ 12:

Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 37-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 33-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 31-րդը՝ մնալով անփոփոխ նախորդ ամսվա համեմատ:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. մայիսի 25-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Ապրիլ ամսվա տնտեսական ակտիվության բարձր ցուցանիշները մեծամասամբ պայմանավորված են բազայի էֆեկտով:** Ինչպես սպասվում էր, 2020թ. ապրիլի խոր անկման համեմատ 2021 թվականի նույն ժամանակահատվածում գրանցվել է բարձր աճ: Սակայն, վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե այդ աճերից հանենք բազայի էֆեկտը, ապա ընդհանուր ՏԱՅ-ի աճը կլինի շատ փոքր, իսկ որոշ ճյուղերում նույնիսկ անկում կունենա: Դա նշանակում է, որ տնտեսությունը դեռևս գտնվում է անկման փուլում և վերականգնման նշաններ

դեռևս չկան: Այնինչ, կառավարության հայտարարություններն այնպիսին են, որ կարծես տնտեսությունն ամբողջությամբ վերականգնվել է և թևակոխում է բարձր աճի փուլ: Սա շատ վտանգավոր է, քանի որ տնտեսական իրավիճակի վերաբերյալ սխալ պատկերացում ունեցող կառավարության գործողությունները չեն կարող արդյունավետ լինել: Իսկ դրանց անարդյունավետության կամ բացակայության պայմաններում տնտեսական վերականգնումը անընդհատ կդանդաղի:

2. Հարկաբյուջետային քաղաքականությունը դեռևս պահպանում է անկայունության զարգացման ուղին: 2020թ. փաստացի տվյալներով կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը, իսկ 2021թ. մարտի վերջի դրությամբ արդեն իսկ գերազանցել է 2020թ. ՀՆԱ-ի 70%-ը: Այս պայմաններում կառավարությունը շարունակում է պարտքի հաշվին իրականացնել ընթացիկ ծախսեր, իսկ կապիտալ ծախսերի մասով գրեթե աշխատանքներ չեն տարվում: 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին կապիտալ ծախսերի աճի զգալի մասը պայմանավորված է եղել պաշտպանության նախարարության ծախսերի աճով: Դա նշանակում է, որ տնտեսական պոտենցիալը մեծացնող կապիտալ ծախսեր տարվա սկզբից ի վեր գրեթե չեն արվել, մինչդեռ կառավարության պարտքը, դրամով արտահայտված, նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աճել է շուրջ 30 տոկոսով:

3. Գնաճի տեմպը շարունակում է արագանալ: 2021թ. ապրիլին 12-ամսյա գնաճը շարունակել է արագանալ՝ հասնելով 6.2%-ի: Գնաճի հետագա արագացումը զսպելու նպատակով կենտրոնական բանկը՝ սկսած 2020թ. դեկտեմբեր ամսից, շարունակաբար բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Ստացվում է, որ մի կողմից՝ գնաճի արագացումը բացասաբար է ազդում բնակչության կենսամակարդակի վրա՝ նվազեցնելով տնօրինվող իրական եկամուտը, մյուս կողմից՝ կենտրոնական բանկը, իրականացնելով զսպող⁷ քաղաքականություն, ավելի է նվազեցնում ամբողջական պահանջարկը՝ խորացնելով տնտեսական անկումը և բացասաբար ազդելով բնակչության կենսամակարդակի վրա:

⁷ Ըստ ՀՀ ԿԲ հայտարարությունների՝ նույնիսկ տոկոսադրույքի բարձրացման պայմաններում դրամավարկային քաղաքականության խթանող դիրքը դեռևս պահպանվում է: Սակայն, միևնույն ժամանակ, տոկոսադրույքի բարձրացումը նվազեցնում է խթանման չափը, ինչը կարելի է ընկալել որպես նախորդ ժամանակահատվածի համեմատ զսպող քաղաքականություն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: